Պ-053-28.09.2021-ԱՊՀ-011/0 *ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգենեերգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի 31.2-րդ հոդվածի ~~2-րդ մասը «մարմինների» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ գիտությունների ազգային ակադեմիայի» բառերով~~ 2-րդ մասից հանել <<Հայաստանի Հանրապետության արդարադատության, առողջապահության բնագավառների պետական կառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների>> բառերը:

Հոդված 2. Օրենքի 34-րդ հոդվածի <<իրավաբանական անձինք>> բառերից հետո լրացնել <<սույն օրենքի 31. 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում՝ Ոստիկանությունը>> բառերը:

Հոդված ~~2~~3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակմանը հաջորդող օրվանից~~ հրապարակումից երեք ամիս հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 31.2. **Թմրամիջոցների և հոգեմետ (հոգենեերգործուն) նյութերի օգտագործումը փորձ ագիտական գործունեության մեջ**

1. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգենեերգործուն) նյութերի օգտագործմամբ փորձաքննության անցկացում թույլատրվում է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ նշված գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի առկայության դեպքում:

2. ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության, առողջապահության բնագավառների պետական կառավարման մարմինների, ինչպես նաեւ գիտությունների ազգային ակադեմիայի ենթակայությամբ գործող կազմակերպությունների,~~ ոստիկանության կողմից թմրամիջոցների և հոգեմետ (հոգենեերգործուն) նյութերի օգտագործմամբ փորձաքննություններն իրականացվում են առանց նշված գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի:

(31.2-րդ հոդվածը լրաց. 19.01.21 ՀՕ-32-Ն)

Հոդված 34. **Թմրամիջոցների և հոգեմետ (հոգենեերգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության հաշվետվությունը**

(վերնագիրը փոփ. 08.09.08 ՀՕ-158-Ն)

Թմրամիջոցների և հոգեմետ (հոգենեերգործուն) նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք սույն օրենքի 31. 2-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում Ոստիկանությունը պարտավոր են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ՝ լիցենզիայի պայմանների և պահանջների վերաբերյալ:

(34-րդ հոդվածը փոփ. 08.09.08 ՀՕ-158-Ն)